

крестьянская **ԽՈՒՐՄԱՅԻՆ**
Газета **ՀԱՅԱՍՏԱՆ**

Բ. ԼԵՈՆՏՅԵՎ

ՄԱՆՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԽԱՏԱՆՔԸ
— ՅԵՎ ԿՈՒՆՏՆԵՍԱՅԻՆ —
ՊԱՏԻ ԹԵՐԹԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գառախոսություն յերկուրդ

ԿՈՒՆՏՆԵՍԱՅԻՆ ՅԵՎ ԲՐԻԳԱԴԱՅԻՆ ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ
ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ ՇԵՌԱԿԱ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Գառախոսությունները լույս են տեսնում **ՅԵ.ՉՈՒՐՄԻ**
ընդհանուր խմբագրությամբ

ՀԵ(Բ)Ն Ե Ն ԻՐՄՏԱՐԱԿՅՈՒՐՅՈՒՆ — „ԽՈՒՐՄԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ“

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1936

30 JAN 2018

крестьянская **ԽՈՒՐՄԱՅԻՆ**
ԳԱՅԵՄԱ **ՀԱՅԱՍՏԱՆ**

Բ. ԼԵՈՆՏՅԵՎ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ
ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՊԱՏԻ
ԹԵՐԹԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Դասախոսությունը յերկուրդ

ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՅԵՎ ԲՐԻԳԱԴԱՅԻՆ ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ
ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ ՇԵՌԱԿԱ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Դասախոսությունները լույս են տեսնում ՅԵ՝ ԶՈՒՐԱՐԻ
ընդհանուր խմբագրությամբ

Մեծ հայրենիքի պաշտպանութեան դերքերում	62
ՊԱՋԸ-Ավիտքիմը պաշտպանութեան հասարակական ծախս- լուն կազմակերպութիւնն է	6
Կոլտնտեսութիւններում ստեղծենք ՊԱՋԸ-Ավիտքիմի ամուր կազմակերպութիւն	9
Առաջավորների որինակը	13
Պաշտպանութեան տուն (խրճիթ)	18
Իրիական ջոկատ	21
Պատրաստ սանիտարական պաշտպանութեան	24
Վորոշիլովյան հեծելակներ	27
Ֆիզիկուլտուրան և հրաձգային սպորտը կոլտնտեսութիւ- նում	29
Յերիտասարդ կոլտնտեսականներ՝ սավառակի վրա	32
Պաշտպանութեան մասսայական աշխատանքի մյուս ձևերը	35
Կերտնտեսութիւնները դարձնենք պաշտպանութեան ստ- րոցներ	38
Սովորել լավագույն պատի թերթերի խմբագիրներէրէց	42
Ստուգիչ հարցեր	45
	48



11-2817131

**ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՍԵՋ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ ԵՆ
ՀԵՏԵՎՅԱԼ ՔԵՄԱՆԵՐԸ**

1. Ներածական մեթոդական նամակ ուսումնական պլանի հետ :
2. Դասախոսութիւններ—«Բողոքական մամուլն ու սոցիալիստական շինարարութիւններ» :
3. Դասախոսութիւններ—«Պաշտպանութեան աշխատանքն ու պատի թերթի խնդիրները» :
4. Դասախոսութիւններ—«Պատի թերթն ու նոր Սահմանադրութիւնները» :
5. Դասախոսութիւններ — «Թերթի խնդիրներն ու բովանդակութիւնները» :
6. Դասախոսութիւններ—«Ինչպես գրել թղթակցութիւնները» :
7. Դասախոսութիւններ—«Պատի թերթի խմբովի աշխատանքը» :
8. Դասախոսութիւններ—«Ինչպես աշխատել գյուղթղթակիցների մեջ» :
9. Դասախոսութիւններ.—«Թղթակցութեան ուղղումը» :
10. Դասախոսութիւններ.— «Դարնանացանքը և պատի թերթի խնդիրները» :
11. Դասախոսութիւններ.—«Արտաքին ձևավորումը» :
12. Դասախոսութիւններ — «Մամուլի ուրը և «Պրավդա»-յի 25-ամյակը» :
13. Դասախոսութիւններ—«Մասնաշաղկապի աշխատանքը» :
14. Դասախոսութիւններ — «Քննադատութեան վրձնն ու գործունեութիւնները» :
15. Դասախոսութիւններ—«Հոկտեմբերյան հեղափոխութեան 20-ամյակը» :
16. Դասախոսութիւններ — «Պատի թերթը ձմեռը» :
17. Դասախոսութիւններ — «Յերգիծանքը պատի թերթում» :
18. Դասախոսութիւններ — «Պատի թերթը կոլտնտեսային կազմակերպութիւնների ոգնականն է» :

• 1937 թվի սկզբին Մոսկվայում գումարվում է Պաշը-Ավիո-քիմի Համամիութենական III համագումարը :

Պաշը-ավիոքիմականները, կազմակերպչորեն ամրապնդելով իրենց շարքերը, պատրաստվում են այդ համագումարը դիմադրելու «վորոշիլովյան հրաձիգներին» և «վորոշիլովյան հեծյալներին», որաչունների, պարաշյուտիստների ու պլաներիստների, հակառոյալին ու քիմիական պաշտպանութեան ակտիվիստների նոր նվաճումներով, Պաշը-ավիոքիմի մասնաշաղկապի աշխատանքի մյուս թուրք բնագավառներում ձեռք բերած նոր հաղթանակներով :

Բայց և այնպես, ինչպես վերահաշվառման արդյունքներն են ցույց տալիս, դեռևս բազմաթիվ յերկրամասերում և մարզերում Պաշը-Ավիոքիմի կազմակերպչական ու մասնաշաղկապի աշխատանքը դյուրեղում շատ ավելի հետ է մնում քաղաքներում կատարվող աշխատանքից : Մինչդեռ, կոլտնտեսականներն ու կոլտնտեսուհիներն ել քաղաքի աշխատավորութեան նման բուռն ցանկութիւն ունեն ակտիվորեն մասնակցելու իրենց հայրենիքի պաշտպանութեան ամրապնդման գործին, այն հայրենիքի, վորն իրենց ավել է բերկրալից ու յերջանիկ կյանք : Նրանք բուռն ցանկութիւն ունեն առանց արտադրութիւնից կտրվելու տիրապետելու ռազմական տեխնիկային, ռազմական գործին : Պակասում են միայն նրանց խանդավառութեան, նրանց պաշտպանութեան ակտիվութեան կազմակերպչները : Գյուղերում Պաշը-ավիոքիմը շատ քիչ աշխատունակ կազմակերպչութիւններ ունի :

Կոլտնտեսութիւնների պատի թերթերը շատ բան կարող են անել դյուրեղում Պաշը-ավիոքիմի հետամնացութեանը վերջ տալու համար : Նրանք կարող են և պետք է յուրաքանչյուր կոլտնտեսութիւնում ստեղծեն մեր պաշտպանութեան ընկերութեան ակտիվ ու աշխատունակ կազմակերպչութիւն :

Ընկ. Լեոնտյեվի դասախոսութիւնը կողնի պատի թերթերի խմբագիրներին՝ ավելի մոտիկից ծանոթանալու Պաշը-ավիոքիմի աշխատանքներին և առաջադր կոլտնտեսութիւնների փորձին :

Պաշը-ավիոքիմի Կենտրոնական Խորհրդի նախագահ
ԵՅԴԵՄԱՆ

Մեծ հայրենիքի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՄՆԵՐՈՒՄ



Անսահման և մեր յերկրի աշխատավորութեան սերը զեպի էր հայրենիքը:

Անցյալներում, յերբ մի խումբ կապիտալիստներ ու կալվածատերեր միխոններով շահ ելին ստանում իրենց գործարաններէց, Փարբիկաներից ու կալվածներէց, իսկ բանվորներն ու գյուղացիները գիտեցին միայն կարիքը, սովն ու ուժից վեր աշխատանքը, այդ ժամանակ նրանց համար վորպես ծաղր եր հնչում «հայրենիք» բառը: Վաճառականը, աղնվականը, գործարանատերը, խանութպանը, կուլակը, տերտերն ու կալվածատերը—այդ սոցրուկներն ու շահագործողներն այն ժամանակ սիրում էլին խոսել «հայրենիքի» մասին: Նրանք միխոնավոր բանվորների ու գյուղացիների հարկադրում էլին մեռնել այդ հայրենիքի համար, իսկ իրենց գրպաններն ուսցնում էլին պատերազմից ստացվող ոգուտներէց, աշխատավորութեան անողոք շահագործումով:

Այժմ մեր ազատ, Խորհրդային յերկրում հայրենիք բառը հուզում և յուրաքանչյուր բանվորի, կոլտնտեսականի, ծառայողի սիրտը և ուրախութիւնն ու հպարտութիւնն և ներշնչում նրանց: Նրանք իրենց սիրելի հայրենիքն են անվանում իրենց հզոր ու հիանալի յերկիրը, վորովհետև այդ յերկիրն իրոք վոր դարձել է նրանց հայրենիքը, վորովհետև նրա հարստութիւնները նրանց հարստութիւններն են, նրա ուժը նրանց ուժն է: Յուրաքանչյուր նոր գործարան, ամեն մի հեկտար նոր յուրացված հող, սոցիալիզմի կառուցման ճակատում ձեռք բերած ամեն մի հաղթանակ նրանց ընդհանուրի սեփականութիւնն է, վոր բարելավում է նրանց կյանքը, տալիս է նրանց յերջանիկ և ունեւոր կյանք: Աշխատանքը մեր յերկրի աշխատավորութեան համար դարձել է հրճվանքի, փառքի ու հարգանքի աղբյուր, ունեւոր ու

կուլտուրական կյանքի աղբյուր: Մեր յերկրի բոլոր աշխատավորները, բոլոր ժողովուրդները ամուր համախմբվել են իրենց հարազատ Խորհրդային կառավարութեան շուրջը, Լենինի—Ստալինի կուսակցութեան շուրջը, և իր հանձարեղ առաջնորդ, մեր հաղթանակների կազմակերպիչ, մեծ սահմանադրութեան ստեղծագործող ընկեր Ստալինի շուրջը:

Ամեն մի բանվոր, ամեն մի կոլտնտեսական, ամեն մի աշխատավոր իր մեծ, սոցիալիստական հայրենիքի ջերմ հայրենասերն է հանդիսանում: Մենք պարծենում ենք ԽՍՀՄ-ի խաղաղասիրական քաղաքականութեան հաջողութիւններով, ուժեղացնում ենք մեր հարազատ խանվորա-գյուղացիական Կարմիր բանակի հզորութիւնը, ուրախանում ենք մեր արդյունաբերութեան հաղթանակներով, բարձր բերքով, նոր գալոցներով, սկումբներով, հիվանդանոցներով:

Մեր աշխատավորները պատրաստ են մինչև արյան վերջին կաթիլը պաշտպանել իրենց մեծ հայրենիքը և մեծ Ստալինի դրօժը: Նրանք աշալուրջ հետևում են, թե ինչպես իմպերիալիստները նոր համաշխարհային պատերազմ են նախապատրաստում:

Մեր կոլտնտեսականները, մանավանդ սահմանամերձ վայրերում, իրենց սոցիալիստական դաշտերում զբաղված լինելով խաղաղ աշխատանքով, միաժամանակ մեր անվեհեր սահմանապահների հետ միասին ուշի ուշով հսկում են, վոր խորհրդային յերկիրը չմտնեն թշնամիները, լրտեսները, դիվերսանտները, արոցկիստական-գիւնովեփական հակահեղափոխական-տեւորիստական ստոր խմբակի գարչելի թախիթիւկները: Կանգ չառնելով վտանգների առաջ, կոլտնտեսականներն ու կոլտնտեսուհիները, հաճախ ձեռերն ու յերեխաները մեծ հերոսութիւնն ու արիւթիւնն են ցուցաբերում: Նրանք իրենք են ձեռքբերում սահմանը խախտողներին ու հանձնում իշխանութեանը: Յեւ այդ հասկանալի յե: Չե՞ վոր նրանք գիտեն, թե Փաշիստ հափշտակիչներն ինչ նպատակով են ցանկանում զենքը ձեռքին հարձակվել մեր յերկրի վրա: Նրանց նպատակն է իշխանութիւնը վերադարձնել կալվածատերերին ու կապիտալիստներին, նորից ստրկացնել միխոնավոր ազատ աշխատավորներին: Կոլտնտեսականներն իրենց հայրենիքի, իրենց հողի, իրենց ազատութեան համար Կարմիր բանա-

կի շարքերում կկուզեն այնպես, ինչպես չի կարող կուզել վոչ մի կապիտալիստական յերկրի բանակ: Յեվ վորևէ կասկածից դուրս է, վոր մեր վզին փաթաթած ամեն մի պատերազմ կվերջանա մեր հաղթանակով:

Բայց չե՞ վոր հաղթելու համար անհրաժեշտ է լավ խմանալ ռազմական գործը: Մենք պետք է այնպես հաղթենք, վոր, ինչքան հնարավոր է քիչ մարտիկներ զոհ տանք կռիվներում, վոր այդ հաղթանակը մեծ զոհողությունների դնով չլինի:

«Մենք մեր քննամուն, յեթե նա հանդգնի մեզ վրա հարձակվել, պետք է հաղթենք քիչ արյունով, ծախսելով նվազագույն միջոցներ և հնարավորին չափ քիչ գոհեր տալով մեր պանծալի մարտիկներին»: (Վորոշիլով)

Ժամանակակից պատերազմը բարդ տեխնիկայի պատերազմ է: Շատ բան պետք է խմանա Կարմիր բանակի մարտիկը: Ռազմական տեխնիկան ուսումնասիրելը, նրան լիովին տիրապետելը, այն սոցիալիզմի կառուցման մեծ գործին ծառայեցնելը, — այս այնպիսի խնդիր չէ, վոր կարելի լինի լուծել մեկ որում:

Շատ հարցեր են կանգնում այն կոլտնտեսականի առաջ, վորը ցանկանում է պատրաստ լինել իր հայրենիքի պաշտպանությանը:

Այդ հարցերի պատասխանը գտնելուն պետք է ոգնեն և՛ կոլտնտեսային, և՛ բրիգադային պատի թերթերը:

Պատի թերթի մարտական խնդիրն է—կոլտնտեսականների մեջ անսահման սիրո զգացմունք արթնացնել դեպի իրենց մեծ հայրենիքը, բացատրել թե ինչով է թանգ մեզ համար մեր հայրենիքը, ինչու մենք պետք է սովորենք պաշտպանել այն և միշտ պատրաստ լինել պաշտպանության: Կոլտնտեսականներին ոգնել կազմակերպելու գործնական պաշտպանության աշխատանք և ուսուցում, ամեն որ պատմել, թե հատկապես ինչ պիտի արվի յերկրի պաշտպանունակությունն ամրապնդելու համար, ինչպես անել, դրա համար, վո՞րտեղ միջոցներ ու ղեկավար կազրեր գրոտնել, հաղորդել պաշտպանության աշխատանքի փորձը—այս ամենը յուրաքանչյուր կոլտնտեսային ու բրիգադային պատի թերթի պարտականությունն է:

Ուժե Արմաթիսե Կաշտպանության հասարակական ծավալուն կազմակերպությունն



Ամեն մի լուրջ հասարակական գործ կարելի է զգում լավ կազմակերպության, գործը լավ խմացող կազմակերպիչներին: Ինչքան ել մեծ լինի կոլտնտեսականների ակտիվությունը, ինչքան ել սրտանց ցանկանան նրանք սովորել ռազմական գործը, վոչինչ չի դուրս գա, յեթե չլինի մի ուժեղ հասարակական կազմակերպություն, վորն զբաղվի նրանց ուսուցումով:

Վաղուց արդեն գոյություն ունի ԽՍՀՄ-ի աշխատավորության կամավոր կազմակերպությունը, վորն իրեն նպատակ է դրել աջակցել յերկրի պաշտպանությանը: Այդ կազմակերպությունը կոչվում է Պաշր-ավիոֆիմ, վոր նշանակում է ԽՍՀՄ-ի պաշտպանությանը, Ավիացիոն ու քիմիական շինարարությանն ամակցող ընկերություն: Պաշր-ավիոքիմի միլիոնավոր անդամներն են բանվորները, կոլտնտեսականները, ծառայողներն ու ուսանողները:

Այդ կամավոր ընկերությունը ԽՍՀՄ-ի աշխատավորության մարտական, հասարակական կարգապահությամբ միաձուլված կազմակերպությունն է: Կուսակցության կենտրոնական կոմիտեն և անձամբ ընկեր Ստալինը ոգնում են Պաշր-ավիոքիմին իրենց կոնկրետ ցուցումներով, այնտեղ աշխատելու յեն ուղարկում ըստուգված, կայուն բուլեթիկներ: Կենտրոնական կոմիտեն բոլոր կուսակցական կազմակերպություններից պահանջում է ուշադիր ու հոգատուր վերաբերմունք ունենալ դեպի Պաշր-ավիոքիմը, դեպի նրա աշխատանքի ղեկավարությունը:

Իսկ ինչո՞վ են զբաղվում Պաշր-ավիոքիմի կազմակերպությունները գործարաններում, կոլտնտեսություններում, խորհատնտեսություններում ու ՄՏ-կայաններում:

Պաշր-ավիոքիմը յերիտասարդությանը նախապատրաստում է Կարմիր բանակի մտնելու: Նա իր վրա յե վերցրել նախագորա-

կոչիկներին սկզբնական պատրաստութիւն տալը, վոր կատարվում է Պաշը-ավիոքիմի ուսումնական կայաններում և ճամբարներում :

Պաշը-ավիոքիմը նախապատրաստում է նաև իր մյուս բոլոր անդամներին՝ թշնամու հետ հնարավոր հանդիպման : Նա ձգտում է, վոր Պաշը-ավիոքիմի յուրաքանչյուր անդամ զեթ մի վորևէ ռազմական մասնագիտութիւն սովորի :

Պաշը-ավիոքիմում մեծ ծավալ է ստացել «վորոշիլովյան հրաձիգներ» պատրաստելու գործը :

Աշխատավորութիւնը մեծ հետաքրքրութիւն է ցույց տալիս զեպի ավիացիոն սպորտը : Պաշը-ավիոքիմի կադմակերպութիւններում յուրաքանչյուր բանվոր ու կոլտնտեսական, առանց արտադրութիւնից կտրվելու կարող է ողաչու դառնալ : Պաշը-ավիոքիմն իր այդ աշխատանքը կատարում է իր այերոակումրների (վորոնցից ԽՍՀՄ-ում 114 հատ կա), պլաներական խմբակների



Կիևի մարզի Զլոտոնոշի շրջանի կոլտնտեսութեան Պաշը-ավիոքիմի խմբակն ամիսը 4 անգամ կանոնավոր պարապմունք է ունենում :

ու ահումրների, պարաշյուտային կայանների, վիշկաների և խմբակների միջոցով :

1935 թվի ընթացքում Պաշը-ավիոքիմի կադմակերպութիւններում մի քանի հազար հոգի պարաշյուտով նետվել են սավառնակներից : Պարաշյուտային վիշկաներից թուել են 1 միլ. 120 հազար հոգի :

Հաղարավոր աշխատավորներ պլաներիցմով են զբաղված : Պլաներիցմը—անմոտու թռիչքը—սպառա ողաչուների հիանալի դպրոց է հանդիսանում :

500 հազար յերեխայից ավելի ընդգրկված են Պաշը-ավիոքիմի ավիոմոդելիստական և ավիո-կոնստրուկտորական խմբակներում : Գրանք արդեն ողանավատորմի կադրեր պատրաստելու ամենակրկնական աստիճանն են :

Պաշը-ավիոքիմում ավելի մեծ ծավալ է ստացել բնակչութիւնը հակաողային և հակաքիմիական (ՀՈՔՊ) պաշտպանութիւն համար պատրաստելու գործը : Հաղարավոր բանվորներ ու կոլտնտեսականներ սովորել են յերկար ժամանակ աշխատել հուկադադ հադած, վարժութիւններ են արել փորձնական տազնասրների ժամանակ, մասնակցել են հակազադերով արշալիներին :

Վերջերս հրապարակվել են «վորոշիլովյան ձիավորի» նորմաներ տալու պայմանները : Վորոշիլովյան ձիավորների մի քանի հարյուր ահումրներ ու խմբակներ են աշխատում Հյուսիսային Կովկասի, Ուկրայնայի, Արեւմտյան Սիբիրի և ուրիշ յերկրամասերի ու մարդերի կոլտնտեսութիւններում :

Պաշը-ավիոքիմի աշխատանքը արանցով չի սահմանափակվում : Ռազմածովային սպորտը, սպասարկու շնարուծութիւնը, փոստատար աղալնարուծութիւնը, կարծալիք ռադիո սիրողների խմբակները—այս ամենը ևս ընկերութիւն յուրաքանչյուր կադմակերպութիւնը ծավալում է, նայած տեղական պայմաններին ու անդամների ցանկութիւնը :


Այսպես ուրեմն, մենք տեսնում ենք, վոր Պաշը-ավիոքիմի աշխատանքը բազմապիսի յե ու հետաքրքիր : Նրա ամրող նպատակն է մասսայական կադրեր նախապատրաստել մեր մեծ հայրենիքի պաշտպանութիւն համար : Ի դուր չե, վոր Պաշը-ավիո-

քիմն անվանում են Կարմիր բանակի ուղերով, Կարմիր բանակի ուղերով՝ պաշտպանութան կազմեր պատրաստելու գործում:

Շատ կոլտնտեսականներ դեռ շատ քիչ բան գիտեն Պաշր-ավիոքիմի մասին: Կոլտնտեսային պատի թերթի խնդիրն է՝ պատմել իր ընթերցողներին, թե ինչ բան է Պաշր-ավիոքիմը, ինչքան բազմապիսի աշխատանք է կատարում նա:

Պատի թերթը կենտրոնական թերթերի նյութերն ոգտադարձելով պետք է կոլտնտեսային յերիտասարդութայնը ներգրավի Պաշր-ավիոքիմի կազմակերպությունների մեջ: Պատի թերթը կարող է պատմել, թե ինչպես խորհրդային Թուրքմենստանից 30 կոլտնտեսականներ հեթոսական ձիարչավ կատարեցին Աշխաբադից Մոսկվա և հռչակվեցին ամբողջ յերկրում՝ ու չքանչաններ ստացան: Մեր կառավարությունը «Էննինի» ու «Կարմիր աստղի» չքանչաններով պարգևատրեյ է նաև պարաշյուտիստներ ընկ. ընկ. Կամեննին, Փյոդորովից, Կուտարովին, Շիմարևին, Մյասեց-կուն, Յեդլովիմովին, Չարեյինային և շատ ուրիշները: «Պատվո նշանի» չքանչան ստացան հակազաղով Մոսկվա—Մինսկ—Մոսկվա արչավին մասնակցողները: Պաշր-ավիոքիմի խմբակներում սովորածները շատերը հիմա ամբողջ աշխարհում հայտնի ողաչուններ են դարձել:

Այս ամենը հետաքրքիր ձևերով պատմելով, պատի թերթը կարող է իր ընթերցողին պարզ ու հասկանալի յեղով բացատրել, թե ինչ նշանակություն ունի Պաշր-ավիոքիմի աշխատանքը մեր յերկրի պաշտպանութան գործում, ինչի յեն հարկավոր հրաձիգները, ողաչունները, պարաշյուտիստները, հակազաղի գործածություն սովորելը և այլն և այլն: Պետք է ընթերցողին լայնորեն ծանոթացնել Պաշր-ավիոքիմի աշխատանքի բոլոր ձևերին: Այսպիսով պատի թերթը մեծ դեր կարող է յաղալ իր կոլտնտեսությունում աշխատունակ պաշտպանութայն կազմակերպություն ստեղծելու գործում:



Գյուղում դեռևս Պաշր-ավիոքիմի աշխատանքը բավարար չափով չի ծավալված, իսկ մի շարք շրջաններում, բազմաթիվ կոլտնտեսություններում բոլորովին գոյություն չունի Պաշր-ավիոքիմի կազմակերպություն:

Այդ Պաշր-ավիոքիմի կազմակերպչական ընդհանուր թուլության հետևանք է, մի բան, վոր նչեց Համ Կ(բ)Կ Կենտկոմը 1935 թվի աշնան իր հատուկ վորոշումով:

Կուսակցության կենտրոնական Կոմիտեն մատնանչեց Պաշր-ավիոքիմի կազմակերպչական աշխատանքի վատ գրությունը և նչեց ընկերության մասսայական աշխատանքի բարելավման ուղիները: Այն հիմնականը, վորի համար պետք է պայքարեն Պաշր-ավիոքիմիականները, — այդ ընկերության սկզբնական կազմակերպությունների ամբայնդումն է ձեռնարկության մեջ, կոլտնտեսությունում, յտրհտնտեսությունում, հիմնարկության մեջ:

Ստեղծել այնպիսի սկզբնական կազմակերպություններ, վորոնք պաշտպանության գործը սովորելու իսկական դպրոցներ դառնան իրենց անդամների համար, բարձրացնեն Պաշր-ավիոքիմի անդամի կոչումը, ստեղծեն պաշտպանության աշխատանքի դեկավար ու կազմակերպիչ նոր կազմեր, վորոնք գիտենան ու սիրեն իրենց գործը, կարողանան իրենց հետևից տանել բանվորական ու կոլտնտեսական մասսաներին—աստ սրանք են այն խնդիրները, վոր կուսակցությունը գրել է Պաշր-ավիոքիմի կազմակերպությունների առաջ:

Վերջին տարվա ընթացքում Պաշր-ավիոքիմը յտոյր աշխատանք է կատարել իր կազմակերպությունների ամբայնդման

սկզբութեամբ: Ամբողջ Միութեան մեջ Պաշտ-ավիտքիմի անդամ-ները վերահաշվառում ե կատարվել, կատարվել ե նաև անդամատոմսերի փոխանակում, սկզբնական կազմակերպութեանները մեծ մասում Պաշտ-ավիտքիմի խորհուրդները վերընտրութեան ե տեղի ունեցել:

Այս ամբողջ կազմակերպչական վերակառուցման հիմքում զբոված ե Պաշտ-ավիտքիմի անդամի կոչման բոլորովին նոր հասկացողութեան: Ընկերութեան կանոնադրութեան մեջ ե մտել ընկերութեան անդամի հետևյալ բնորոշումը. «Պաշտ-ավիտքիմի անդամ կարող ե լինել միայն նա, ով անդամ ե վորեւե սկզբնական կազմակերպութեան, մասնակցում ե ընկերութեան աշխատանքին ե կանոնավոր վճարում ե անդամավճարը»:

Ամենևին կարիք չկա Պաշտ-ավիտքիմի անդամ «հավաքագրելու» ձեռնարկութեան բոլոր բանվորներին, կամ կոլտնտեսութեան բոլոր կոլտնտեսականներին: Ընդհակառակն, այդպիսի «հավաքագրումն» պետք ե դատապարտել: Պաշտ-ավիտքիմի անդամ լինելը միանգամայն կամավոր բան ե:

Սակայն, ինչպես տեսանք, Պաշտ-ավիտքիմի անդամի վրա վորոշակի պարտավորութեաններ են դրվում:

Պաշտ-ավիտքիմի անդամը սոցիալիստական շինարարութեան առաջավոր, ակտիվ, քաղաքականապես գիտակից մասնակիցն ե:

Պաշտ-ավիտքիմի անդամն ակտիվ մասնակցում ե իր (Պաշտ-ավիտքիմի) կազմակերպութեան աշխատանքին ե ուսումնասիրում ե գոնե մեկ ուղղական մասնագիտութեան:

Ձեր կոլտնտեսութեանում կա՞ արդյոք Պաշտ-ավիտքիմի կազմակերպութեան. յեթե կա — ինչպե՞ս ե աշխատում, վերակառուցվել՞ ե արդյոք համաձայն այն նոր, բարձր պահանջների, վոր առաջադրված ե Պաշտ-ավիտքիմի կազմակերպութեաններին:

Պաշտ-ավիտքիմի անդամ կոլտնտեսականները հասկացել են արդյոք, վոր Պաշտ-ավիտքիմը պաշտպանութեան ակտիվիստների առաջավոր կազմակերպութեանն ե, վոր նրա անդամ լինելու համար պահանջատեղի ե պաշտպանութեան գործնական աշխատանքին ակտիվ մասնակից դառնալ:

Ահա այն առաջին հարցերը, ամեն մի պատի թերթի խմբա-

զրահան կոլեգիայի առաջ, յուրաքանչյուր խմբագրի ու գյուղ-թղթակցի առաջ, յերբ նա պատի թերթում դնում ե պաշտպանութեան հարցերն ու Պաշտ-ավիտքիմի աշխատանքի խնդիրները:

Պատի թերթը պետք ե ամենորոյա պայքար մղել իր կոլտնտեսութեան մեջ Պաշտ-ավիտքիմի ամուր կազմակերպութեան ունենալու համար: Ինչպե՞ս կարող ե անել այդ:

Դրա համար թերթի աշխատանքին մասնակից պիտի անել կոլտնտեսութեանում յեղած Պաշտ-ավիտքիմի անդամներին (իսկ յեթե այդպիսիք չկան, նրանց, ովքեր ցանկանում են անդամ դառնալ): Թող նրանք պատի թերթում գրեն, թե ինչ են արել պաշտպանութեան հարվածային իրենց կոչումն արդարացնելու համար: Նրանցից կարելի յե նյութեր ստանալ, թե ինչպես ե աշխատում կոլտնտեսութեան Պաշտ-ավիտքիմի խորհուրդը, արդյոք կոլտնտեսութեանում Պաշտ-ավիտքիմի անդամների վերահաշվառում ե անդամատոմսերի փոխանակում կատարվել՞ ե, կոլտնտեսութեանում իրոք ո՞վ ե արժանի պաշտպանութեան ակտիվիստների այդ առաջավոր կազմակերպութեան անդամի կոչմանը:

Ոմբագրիլը պատի թերթի համար նյութեր պիտի ստանա փոլտնտեսութեան Պաշտ-ավիտքիմի կազմակերպութեան նախագահից ու խմբակների կազմակերպչներից իրենց աշխատանքի մասին — ի՞նչ ե անում կազմակերպութեանը, ի՞նչ մարդիկ ե պատրաստում, կահավորված ե արդյոք հրաձգարանը, կա՞ն հակադադեր, հրացաններ, ուսումնական պիտույքներ, կազմակերպված են խմբակներ ե այլն:

Իսկ յեթե կոլտնտեսութեանում բոլորովին չկա Պաշտ-ավիտքիմի կազմակերպութեան ե պաշտպանութեան աշխատանք չի տարվում, ո՞վ պիտի հոգ տանի այդպիսի կազմակերպութեան ստեղծելու մասին:

Ամենից առաջ կոլտնտեսութեան կուսակցական կազմակերպութեանը: Կուսակցական կազմակերպութեանը կատարած չի լինի իր կարեվորագույն պարտականութեանները մեկը, յեթե նա կոլտնտեսութեանում չի կազմակերպել պաշտպանութեան աշխատանքը: Թող կուսակցութեան անդամները ե առաջին հեր-

թին քարտուղարը կամ կուսակազմակերպիչը գրեն պատի թերթում, թե իրենք ինչ են արել և ինչ են ցանկանում անել Պաշտպանության կազմակերպություն ստեղծելու համար: Թող նրանք գրեն, թե իրենք, վորպես առաջավոր մարդիկ, վորպես լենինյան մեծ կուսակցության անդամներ պատրաստվում են արդյոք հայրենիքի պաշտպանությանը, կարողանում են արդյոք կրթակել, լավ ձի հեծնել, խնամել ձին, հակազգ հագնել:

Թերթն իր հարցերը դնում է հաև Կոլտնտեսության կոմյունիստականների առաջ: Հո իզուր չե վոր կոմյունիստներին «Պաշտպանության սիրտ ու հոգի» յեն անվանում:

Ամենուրեք, վորտեղ Պաշտպանության աշխատում է, կոմյունիստականներն ամենակալով մասնակցություն են ունենում նրա աշխատանքներին: Յեվ այդ հասկանալի յե: Ել ո՞վ պիտի առաջավորը լինի հրացանի ուսումնասիրության, ավիացիոն սպորտի, ֆիզկուլտուրայի, ձիավոր սպորտի և ձևերի մեջ, յեթե վոչ յերիտասարդությունը: Իսկ կոմյունիստները միշտ պետք է ամբողջ յերիտասարդության առջևը լինի, նրան տանի իր հետևից:

Գյուղի կոմյունիստականները կուսակցական կազմակերպություն ղեկավարություն պաշտպանության կազմակերպությունների առաջին ստեղծողները պիտի լինեն: Դրա համար նրանք պետք է կապ հաստատեն Պաշտպանության շրջանային խորհրդի հետ, սկզբնական շրջանում Պաշտպանության անդամների գեթ մի փոքրիկ խմբակ համարեն, ժամանակավոր կազմակերպիչ կոմիտե ընտրեն, վորը կսկսի ցուցակագրել ցանկացողներին, անդամների հաշվառում կկատարի, նոր անդամատոմսեր կրատանի և վերջապես անդամների ընդհանուր ժողով կհրավիրի՝ Պաշտպանության կոլտնտեսային կազմակերպության խորհուրդ ու նախագահ ընտրելու համար:

Պատի թերթը, կուսակցական ու կոմյունիստական կազմակերպությունների հետ այսպես կարող է սկսել կոլտնտեսության մեջ պաշտպանության աշխատանքը ծավալելու գործը:

Այստեղ ևս, ինչպես և մյուս բոլոր աշխատանքներում, յուրաքանչյուր խմբակի, խմբկոլի յուրաքանչյուր անդամ ու ա-

մեն մի գյուղթղթակից — կոլտնտեսություն այդ առաջավոր մարդիկը — պետք է անձնական որինակ ցույց տան, դառնան պաշտպանության աշխատանքի հարվածայիններ ու կազմակերպիչներ: Վոչ միայն մամուլի միջոցով պիտի պայքարել պաշտպանության աշխատանքի ամրապնդման համար, այլ և անձամբ պետք է տիրապետել ռազմական — պաշտպանության գիտելիքներին և այդ գիտելիքները հաղորդել ուրիշներին ևս:

Այս տեսակետից փայլուն որինակ են տվել Մոսկվայի մարզի, Կալուզայի շրջանի Լոբանովսկ գյուղի գյուղթղթակիցները: Այդ գյուղում կոլտնտեսային թերթերի բոլոր 18 ակտիվ գյուղթղթակիցները կանոնավորապես և ամբողջ կազմով հաճախում են ռազմական — պաշտպանության պարասումներին: Նրանցից յուրաքանչյուրի կրծքին մի քանի նշան կա («Պատրաստ աշխատանքի և պաշտպանության», «Վորոշիլովյան հրաձիգ», «Պատրաստ հակառակին ու քիմիական պաշտպանության»): Այդ գյուղի պաշտպանության տան «մամուլի անկյունում» կախված է հետևյալ լողունգը. «Դյուրաբարակից, հիշի՛ր, դու պետք է առաջավոր իլենս հրաձգության մեջ, առաջավորը՝ հակազգի գործածությունը սովորելու մեջ, առաջավորը՝ ռազմական գործի տեսությունն ուսումնասիրելու մեջ»:

Այդ գյուղի մի շարք գյուղթղթակիցներ հաջողությամբ սովորել են ռազմական — պաշտպանության գործը: Նրանք դարձել են Պաշտպանության աշխատանքների ակտիվ կազմակերպիչներ ու լավ ղեկավարներ: Որինակ՝ գյուղթղթակից Ի.Դ. Սյոմենը ղեկավարում է կոլտնտեսականների ռազմականացված ձիավոր ջոկատը: Նրա առաջարկությամբ կառուցվել է ռազմականացված ձիանոց: Դաշտում հատուկ տեղ է առանձնացված ռազմական ձիավարություն սովորելու համար:

11-28/1932



Նորագոյնութեան ՊՊՆԱԿԸ

Արեւմտյան մարզի Իզմիրի շրջանի «Կրասնի պախար» կոլտնտեսութեան շրջանի 3 տարի յետոյ, ինչ գոյութեան ունի Պաշլը-ավիտըիմի կազմակերպութեան: Այդ կոլտնտեսութեան անդամ կոմյերիտական ընկերներ Մենահը, Փոմենը, Անդրեւը և Լաւրովը գործն սկսեցին բոլորովին վոչնչից: Կոլտնտեսութեան մեջ Պաշլը-ավիտըիմի վոչ մի անդամ չկար, նույնիսկ հրացաններ չէին: Իսկ այժմ այնտեղ 120 աշխատունակ կոլտնտեսականներէց 50-ը Պաշլը-ավիտըիմի անդամ են:

Կոմյերիտական յերիտասարդութեանը, վոչինչ չունենալով, բացի աշխատանքի ջերմ ցանկութեանից, գործն սկսեց փոքրից: Նա իր վրա վերցրեց կոլտնտեսութեան բերքի պաշտպանութեանը և կոյնիտիվ կերպով պաշտպանութեան հեկտար ցանեց: Զիրիք տարվա ընթացքում կազմակերպութեանն աճեց, բարձրացավ նրա հեղինակութեանը, աճեցին նաև իրենք՝ Պաշլը-ավիտըիմի անդամները—վորոշիլովյան, հրաձիգի և ՊԱՊ-ի կրծքանշաններ՝ նորմաներ Եւրոպայի անոցին սերմացուն. կազմակերպեցին սրինակելի գոմեր:

Այժմ «Կրասնի պախար» կոլտնտեսութեան Պաշլը-ավիտըիմի կազմակերպութեանը պաշտպանութեան ահագին գույք ունի: Արդեն կա պաշտպանութեան մի խոշոր տուն, վորի մեջ կան բազմաթիվ մարտական իրեր, պլակատներ, նշանատեղեւան վայր, վարժական հրացաններ, հակազագեր, դահուկներ, 500 զրքից բաղկացած գրադարան:

Պաշտպանութեան տանը գործում են հետևյալ խմբակները—հրաձիգային, հակառոպային ու քիմիական պաշտպանութեան և նույնիսկ Պաշլը-ավիտըիմի անդամների անգրագիտութեան վերացման խմբակ: Պաշլը-ավիտըիմի անդամներից 16-ը վորոշիլովյան

հրաձիգ են (բացի այդ, անցյալ տարի կոլտնտեսութեան նորակոչիկները կարմիր բանակ զնացին վորպես վորոշիլովյան հրաձիգներ), 10 հոգի ՊԱՊ-ի կրծքանշան ունեն: Կոլտնտեսութեան ձիանոցը «Պաշլը-ավիտըիմական» է: Պաշլը-ավիտըիմական ձիապանները ձիերին մաքրում ու խնամում են զինվորականի պես, սիրով ու հոգատարութեամբ: Պաշլը-ավիտըիմի անդամները կոլտնտեսութեան համար մի խոշոր ուղիւ ընդունիչ են սարքավորել: Կոլտնտեսականները լավ դիտեն նաև հակազագի գործածութեանը. փորձի համար նրանք դաշտում աշխատել են հակադադ հագած:

Այժմ «Կրասնի պախար» կոլտնտեսութեան Պաշլը-ավիտըիմի անդամները նախապատրաստելով Պաշլը-ավիտըիմի Համամիութենական 3-րդ համագումարին (վոր գումարվելու յետ 1937 թվի սկզբներին՝ Մոսկվայում), կազմակերպում են մի ջոկատ՝ 25 հոգի վորոշիլովյան հրաձիգներից, ատեղծում են ՀՈՒՊ-ի ջոկատ՝ 80 հոգուց բաղկացած, անդամագրվել են Մոսկուայի Այերոակոմբին և պատրաստվում են մի պլաներ ձեռք բերելու:

Առանձնապէս արժեքավոր է այն, վոր «Կրասնի պախար»-ի Պաշլը-ավիտըիմականները յոթ ուր մի անգամ Պաշտպանութեան տանը լույս են ընծայում իրենց պատի թերթը՝ «Պաշտպանութեան համար» անունով: Այդ թերթն ոգնում է կոլտնտեսութեան մեջ պաշտպանութեան գործն ամրապնդելուն:

Այժպիսի կոլտնտեսութեանները հարյուրներով կան մեր յերկրում: Դժբախտութեանն այն է միայն, վոր այդ առաջավոր կազմակերպութեանների զնահատելի փորձը շատ դանդաղ է հազորդվում շրջակա կոլտնտեսութեաններին ու խորհանտեսութեաններին:

Այս տեսակետից մեր բոլշևիկյան մամուլի, կոլտնտեսային պատի թերթերի դերը շատ մեծ է: Պատի թերթերի առաջ խնդիր է դրվում՝ Պաշլը-ավիտըիմի լավագոյն կազմակերպութեան փորձը հաղորդել հետ մնացողներին:

Մեծ թիւերի հետեւից ընկնելու կարիք չկա. թեկուզ սկզբնական շրջանում կազմակերպութեանը քիչ անդամներ ունենա, հոգ չէ, միայն թե յեղած անդամները լավ հասկանան իրենց դերը, իրենց պարտականութեանները: Թեկուզ սկզբնական շրջանում

1-2 խմբակ լինի, միայն թե յուրաքանչյուր խմբակն ունենա էր հմուտ ղեկավարը: Ավելի լավ է նախ հրահանգիչներ, ղեկավարներ պատրաստել, ապա միայն նոր խմբակներ կազմակերպել:

Կազմակերպությունների ղեկավարներ պիտի ընտրվեն ուղիմական գործը լավ իմացող և աշխատանքի ջերմ ցանկություն ունեցող մարդիկ: Այդպիսի մարդիկ բոլոր կոլտնտեսություններում կան:

Կոմյերիտականները, նախագորակոչիկները, զորացրված կարմիր բանակայինները, ստախանովական կոլտնտեսականները, քյուզլթղթակիցները—ահա թե ումնից պիտի ստեղծվի կազմակերպության կորիզը:

Խմբագրի ու խմբկուլի խնդիրն է՝ այդ բոլոր մարդկանց ախիվորեն մասնակից անել պատի թերթին: Նրանց ողնությամբ ըսյնորեն լուսաբանել պաշտպանության աշխատանքը, պայքարել աշխատանքի այն լավագույն ձևերի յուրացման համար, վոր բոլորն ունեն սուսջալոր կազմակերպությունները:



Կոլտնտեսություն մեջ պաշտպանության գործի լավագույն կարգավորման ամենակարևոր պայմաններից մեկը (հետևապես և պատի թերթի ամենակարևոր թեմաներից մեկը) կոլտնտեսության մեջ Պաշտպանության տուն կամ խրճիթ կազմակերպելն է:

Պաշտպանության տունը (խրճիթը) այն տեղն է, վորտեղ կատարվում է պաշտպանության ամբողջ աշխատանքը, վորտեղ պարասպում են խմբակները, պահվում են հրացաններն ու հակաֆաղերը, վորտեղ պաշր—ավիոքիմականները յերեկույթներ, դասխոսություններ ու ժողովներ են ունենում:

Համարյա ամեն մի կոլտնտեսությունում կարելի յե գտնել մի վորևե ազատ տուն, խրճիթ, կամ թե մի հին տուն վերանորոգել և դարձնել Պաշտպանության տուն:

Ահա մի որինակ:

Կուլյրիչևի մարդի Պրիգորոդնի շրջանի Բոլշայա Ռյազան քյուզլի կոլտնտեսության ակտիվը ձեռնարկեց Պաշտպանության տան կազմակերպմանը: Գյուղում կար մի կիսավեր տուն: Նրանք իրենց ուժերով նորոգեցին այդ տունը, վարագույրներ ու լողունգներ կախեցին, այնպես դարդարեցին, վոր տունը դարձավ բոլորովին հրապուրիչ: Ձեռք բերին զանազան անհրաժեշտ պիտույքներ, հրացաններ, հակաֆաղեր և այլն: Պաշտպանության տանը կից կազմակերպվեցին հրաձգարան, մարդադաշտ, ուղիմականացված դոմ և այլն: Ծուռով Պաշր—ավիոքիմի անդամների թիվը բարձրացավ ու հասավ 54-ի, վորտեք պարասպում են զանազան խմբակներում:

Այսպիսի պաշտպանության տներ շատ կոլտնտեսություններում են կազմակերպվել:



Մոսկվայի մարզի Կալուգայի շրջանի Մոլոտովի անվան կոլտնտեսությունում
հակառդային պաշտպանության խմբակը շատ լավ է աշխատում:

ՆԿԱՐՈՒՄ.—Կոլտնտեսության սանիտարական ջոկատը փորձական պարագ-
մունքի ժամանակ չգազով բունավորվածին՝ դուրս է բերում «վարակված
վայրից»:

Պաշտպանության աշխատանքի կարգավորմանն ոժանդակե-
լով՝ պատի թերթը պետք է մեծ ջանք թափի, վոր իրենց կոլտն-
տեսությունում ևս Պաշտպանության տուն լինի: Այս հարցի մա-
սին պետք է սպառել Պաշր-ավիտքիմի ակտիվի գործնական ա-
ռաջարկությունները և հետապնդել նրանց կատարմանը:

Թերթի առաջին գործը պիտի լինի՝ կոլվարչության ու
գյուղխորհրդի առաջ խնդիր դնել, վոր մի շենք հատկացվի
Պաշտպանության տան համար: Շենքը լինելուց հետո թերթը
պետք է մոբիլիզացիայի յենթարկի ակտիվին՝ այդ շենքը վերա-
նորոգելու, կարգավորելու և կահավորելու ուղղությամբ: Այնու-
հետև թերթի ու գյուղթղթակիցների խնդիրն է ուշադիր հետևել,
վոր Պաշտպանության տունը ծառայի իր նպատակին, վոր լրացվի
պեկան ինվենտարը, կանոնավոր աշխատեն խմբակները և այլն:

Պաշտպանության տները պաշտպանության աշխատանքի հե-
նակետեր են և պետք է գոյություն ունենան բոլոր կոլտնտեսու-
թյուններում:

ՔՈՄՄՍԿԱՆ Զոհատ



Պաշտ-ավիոքիմի կոլտնտեսային կազմակերպությունն ունի իր առանձնահատկությունները, վորոնցով տարբերվում է քաղաքների կազմակերպություններից:

Պաշտ-ավիոքիմի հիմնական լողունըն է — «Պաշտ-ավիոքիմը եմ շՄ-ի խաղաղ աշխատանքի ու պաշտպանության հենարանն է»։ Այս լողունըն ընդգծում է, վոր այդ կամավոր կազմակերպության աշխատանքը սերտորեն կապված է այն արտադրության հետ, վորտեղ աշխատում են իր անդամները: Յեվ այդ հասկանալի յե. չի կարելի իրարից անջատել պաշտպանության և խաղաղ սոցիալիստական շինարարության խնդիրները: Հացի, բամբակի, խաղողի ու ճակնդեղի բարձր բերքի համար մղվող պայքարը միաժամանակ պայքար է մեր մեծ հայրենիքի պաշտպանության ամրապնդման համար: Պարզ է ուրեմն, վոր Պաշտ-ավիոքիմը, վորպես աշխատավորության հասարակական կազմակերպություն, ակտիվորեն մասնակցում է այն աշխատանքին, վոր կատարվում է ընկեր Ստալինի առաջադրած խնդրի իրագործման — մեր կոլտնտեսային դաշտերի բերքատու վուծյան բարձրացման համար: Պաշտ-ավիոքիմն իր յուրաքանչյուր անդամին կոչ է անում հարվածային, ստախանովական լինել արտադրության մեջ:

Պաշտ-ավիոքիմի քիմիական ջոկատը պաշտպանության աշխատանքի հիմնական ձևերից մեկն է: Սակայն այդ ջոկատը միաժամանակ կոլտնտեսությանն ողջում է վրասատուների դեմ պայքարելու, հանքային պարարտացում կատարելու, սերմացուն ախտահանելու, սոցիալիստական սեփականությունը պաշտպանելու գործերում: Քիմիական ջոկատի անդամները հրաձգություն են սովորում, ուսումնասիրում են հակազդի գործածու-

թյունը, հականեխման ձևերը, պարարտանյութերի, քիմիական նյութերի ու թույների հատկությունները և այլն: Հետևապես, կարևոր է, վոր պատի թերթը նախաձեռնողը լինի այդպիսի քիմիական ջոկատի կազմակերպման գործում: Կոլտնտեսության վարչությունը սիրով կընդառաջի այդ գործին: Վարչությունը կարող է քիմիական ջոկատի հետ պայման կապել, վոր ջոկատը վորոչ պարտավորություն վերցնի (մկների, թրթուռների վոչընչացում, սերմի ախտահանում և այլն), իսկ վարչությունը խմբակի համար ձեռք բերի հակազդեր, հրացաններ, գրակա-



Պաշտ-ավիոքիմականները դաշտային մկների բները բուսավորում են Բլաք-դիկրին բուսավոր նյութով (Դնեպրոպետրովսկի մարզի Լենինի անվան կոմունա):

նություն և այլն: Շատ կոլտնտեսություններում այդպես է ար-
վում:

Ինչպե՞ս է կազմակերպվում քիմիական ջոկատը: Սովորա-
բար այդ ջոկատը կազմված է լինում յերեք խմբակից (յուրա-
քանչյուր դաշտավարական բրիգադում մեկ խմբակ): Ամեն մի
խմբակում լինում են 10 մարդ. 5 հոգի էլ լինում են ջոկատի
հրամանատարական կադրը — ջոկատի պետ, 3 հոգի խմբակնե-
րի պետեր և մեկ քաղղեկ: Այդպիսով ամբողջ ջոկատը բաղկա-
կացած է լինում 35 հոգուց: Բոլոր քիմիական ջոկատները պա-
բայում են միասնական ծրագրով, ընդամենը 120 ժամ: Ծրագրի
մեջ են մտնում քաղ-պարապմունք, մարտական ու հրաձգային
պատրաստություն, հատուկ քիմիական պարապմունքներ և
